ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» փետրվարի 2023 թ. N 11-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 183-Ն հրամանով հաստատված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքի աշխատանքային տեղեկությունները, ինչպես նաև Հովսեփ Էջոյանի 2023 թվականի փետրվարի 1-ի դիմումը՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության դադարեցման մասին

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 լիցենզիայի և 3 ներդիրի գործողությունը սույն թվականի փետրվարի 6-ից, մասնավորապես՝

1) «Շտեռն-սերվիս» (ՀՎՀՀ՝ 00448233) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված № 16797 լիցենզիայի և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի № 16797-01 ներդիրի գործողությունը,

2) «Ադդեռ շին» (ՀՎՀՀ՝ 00493199) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված № 17792 լիցենզիայի և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի № 17792-01 ներդիրը,

3) «Բեսթ բիլդինգ» (ՀՎՀՀ՝ 02266584) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված № 16406 լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի № 16406-01 ներդիրը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

2) համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2/13/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ